ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 237 - Ա
26 նոյեմբերի 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԹԻՎ 136-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 844-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ և 5-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ստեղծել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝

Խլղաթյան Սևակ - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, նախագահ
Աղեկյան Ալբերտ - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Բաղալյան Գարիկ - մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ
Ասատրյան Իվան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Թաթարյան Յուրա - մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
Ղազարյան Նորիկ – մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ, քարտուղար
Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով ստեղծելու մասին>> N 136-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ